



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 1 (25)

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2003 թվականի ապրիլի 4-ից

Երեւան 2003

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ	5, 71
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 73
ՕԳՏԱԿԱՐ ՍՈՂԵԼՆԵՐ	21, 83
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	23, 85
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ.....	25, 87
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	27, 89
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	29
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	31
ՑՈՒՑԻՉՆԵՐ	57
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	61
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	90

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet:<http://www.arnpatent.org>
E-mail: arnpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ	5, 71
Сведения о выданных патентах	7, 73
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	21, 83
Сведения о выданных патентах	23, 85
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	25, 87
Сведения о выданных патентах	27, 89
ТОВАРНЫЕ ЗНАКИ	29
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	31
УКАЗАТЕЛИ	57
СООБЩЕНИЯ	61
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	90

CONTENTS

INVENTIONS	5, 71
Information on granted patents	7, 73
UTILITY MODELS	21, 83
Information on granted patents	23, 85
INDUSTRIAL DESIGNS	25, 87
Information on granted patents	27, 89
TRADE MARKS	29
Information on registered trade marks and service marks	31
INDEXES	57
REPORTS	61
TWO-LETTER CODES	90

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
- 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
 - A1 *Գյուտի հիմնական արտոնագիր*
 - A2 *Գյուտի նախնական արտոնագիր*
 - B2 *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
- 21 *հայտի համարը*
- 22 *հայտի ներկայացման թվականը*
- 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
- 24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
- 31 *առաջնային հայտի համարը*
- 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
- 44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54 *գյուտի անվանումը*
- 56 *տեղեկատվության աղբյուրներ*
- 57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
- 71 *հայտատուն, երկրի կոդը*
- 72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74 *արտոնագրային հավատարմատար*
- 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
- 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 A01B 15/00 (11) 1230 (13) A2
(21) P20020120 (22) 01.07.2002
(42) 16.09.2002
- (71) Գուրգեն Հովսեփյան (AM), Կլիմենտ Անանյան (AM), Հենրիկ Կարապետյան (AM), Նարինե Ալեքսանյան (AM), Համեստ Գալստյան (AM), Հայկ Ամբարյան (AM)
- (72) Գուրգեն Հովսեփյան (AM), Կլիմենտ Անանյան (AM), Հենրիկ Կարապետյան (AM), Նարինե Ալեքսանյան (AM), Համեստ Գալստյան (AM), Հայկ Ամբարյան (AM)
- (73) Գուրգեն Հովսեփյան, Երեւան, Թորոպենցի 1/1, բն. 35 (AM), Կլիմենտ Անանյան, Երեւան, Եր. Քոչարի 21, բն. 76 (AM), Հենրիկ Կարապետյան, Երեւան, Ավան-Առինջ 2/2, բն. 62 (AM), Նարինե Ալեքսանյան, Երեւան Հր. Քոչարի 24, բն. 12 (AM), Համեստ Գալստյան, Երեւան, Ավան-Առինջ 22, բն. 26 (AM), Հայկ Ամբարյան, Երեւան, Շոպրոնի 22, բն. 4 (AM)
- (54) **Գուրգենի աշխատանքային օրգան**
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական տեխնիկային, մասնավորապես, գութանի աշխատանքային օրգանին: Գութանի աշխատանքային օրգանն ունի իրան եւ դրա վրա երկու կետով ամրակցված դանակներ: Դանակները շեղանկյունաձև են եւ ունեն տարբեր կարծրություն: Ծայրային դանակների կարծրությունն ավելի բարձր է, քան միջանկյալ դանակների կարծրությունը, իսկ միջանկյալ դանակների կարծրությունն ըստ հերթականության նվազում է:
- Բարձրացվում է գութանի աշխատանքային օրգանի մաշակայունությունը եւ երկարակեցությունը, 3 նկ.:
-
- (51) 7 A01B 15/00 (11) 1231 (13) A2
E02F 5/02
(21) P20020134 (22) 12.07.2002
(42) 16.09.2002
- (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
- (72) Արշալույս Թարվերդյան (AM), Արման Փեշտիմալյան (AM), Շավարշ Գրիգորյան (AM), Հովհաննես Փեշտիմալյան (AM), Սարգիս Բաղդուրյան (AM)
- (73) Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)
- (54) **Հարթ վարի գութան**
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական

մեքենաշինությանը, մասնավորապես հարթ վարի գութաններին:

Գյուտի էությունը կայանում է նրանում, որ հարթ վարի գութանն ունի շրջանակ, հիդրոգլանով ղեկավարվող քառօղակ մեխանիզմ, դարձկեն կանգնակ, իրանի աշխատանքային մակերեսային կազմող շերտաձողեր եւ դրանց թիկունքում տեղակայված կոշտության կողեր, որոնք հորիզոնական հողերով միացված են խոփին: Խոփը դարձկեն կանգնակին միացված է ուղղաձիգ հողով, իսկ հողավոր միացված լծակներով՝ ճոճվող լիսեռին: Լիսեռը իր վերին ծայրով կոշտ միացված է շրջանակի եւ հեծանի միջեւ տեղակայված կոլիսային մեխանիզմի լծակին, երկկողմ դաշտային տախտակը կոշտ միացված է դարձկեն կանգնակին, իսկ հիդրոգլանը միացված է կանգնակին՝ խոփի պտտման առանցքին համառանցք տեղակայված լծակի միջոցով:

Բարձրացվում է արտադրողականությունը եւ պարզեցվում է գութանի կառուցվածքը, 3 նկ.:

- (51) 7 A01F 91/04 (11) 1232 (13) A2
A01D 34/63
(21) P20010167 (22) 28.12.2001
(42) 17.04.2002
- (71) Կարեն Ալեքսանդրյան (AM), Ռոբերտ Խանոյան (AM), Վարդան Յավրույան (AM), Ռուդիկ Շխիկյան (AM)
- (72) Կարեն Ալեքսանդրյան (AM), Ռոբերտ Խանոյան (AM), Վարդան Յավրույան (AM), Ռուդիկ Շխիկյան (AM)
- (73) Կարեն Ալեքսանդրյան, Երեւան, Տերյան 59, բն. 20 (AM), Ռոբերտ Խանոյան, Երեւան, Խանջյան 37, բն. 5 (AM), Վարդան Յավրույան, Երեւան, Ա. Խաչատրյան 12, բն. 99 (AM), Ռուդիկ Շխիկյան, Երեւան, Բայրոնի 12, բն. 16 (AM)
- (54) **Հացահատիկային կուլտուրաների հավաքման մեքենա**
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինության բնագավառին, մասնավորապես հացահատիկահավաք մեքենաներին: Առաջարկվող մեքենան ունի ցողունների մատուցման մեխանիզմ, որը կազմված է վակուումային կայանքից եւ նրան միացված ընդունման խցից, եւ ցողունների անջատման մեխանիզմ, որը կատարված է ընդունման խցի մուտքային որմնանցքում տեղա-

կայված բջջավոր սալի ձեռով, որի յուրաքանչյուր բջիջը ուղղանկյուն է, ունի դեպի ներս բացվող զապանակված գույգ փեղկեր, որոնց հարակից եզրամասերում տեղակայված են սուր լեզվակներ:

Պարզեցվում է մեքենայի կառուցվածքը, նվազեցվում հատիկների վնասվածությունը, 6 նկ.:

- (51) 7 A01G 9/24 (11) 1233 (13) A2
- (21) P20010168 (22) 28.12.2001
- (42) 15.05.2002
- (71) Ռոբերտ Խանոյան (AM)
- (72) Ռոբերտ Խանոյան (AM)
- (73) Ռոբերտ Խանոյան, Երևան, Խանջյան 37, բն. 5 (AM)
- (54) **Պատվող ջերմափոխանակչի շառավղային թեւ**
- (57) Գյուտը վերաբերում է ջերմատեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ պտտվող ջերմափոխանակիչներին:

Ջերմափոխանակիչը բաղկացած է ջերմատարրով սնող անշարժ խողովակ-կախիչից, պտտվող ջրաբաշխիչից, անշարժ ջրհավաքից, սնամեջ ջերմափոխանակիչ-օդամղիչ թեւերից եւ նրանց վերին եւ ստորին մակերեսային վրա դասավորված սնամեջ կողերից: Սնամեջ թեւերը եւ նրանց վերին եւ ստորին մակերեսային վրա համակենտրոն շրջանագծերով դասավորված սնամեջ կողերը կազմավորված են խողովակների փնջից, թեւը ձեւավորող յուրաքանչյուր խողովակի պրոֆիլավորված ճկմամբ՝ համապատասխան իր գրաված դիրքի թեւի հարթության մեջ:

Պարզեցվում է թեւի կառուցվածքը եւ բարձրանում է ջերմափոխանցման գործակիցը, 3 նկ.:

- (51) 7 A01K 5/02 (11) 1234 (13) A2
- (21) P20020039 (22) 28.03.2002
- (42) 16.06.2002
- (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
- (72) Սերուժան Բաղդասարյան (AM), Արմեն Մարգարյան (AM)
- (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)
- (54) **Կիսահեղուկ կերերի բաշխման կերաբաշխիչ**
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես հեղուկ կերերի բաշխման մեքենաներին:

Առաջարկվող կերաբաշխիչը բաղկացած է կերի բաքից, ելքի եւ լայնական խողովակներից, ելքի կարգավորման փականից եւ ելքի կարգավորման մեխանիզմից: Ելքի կարգավորման մեխանիզմը շարժումի եւ լծակային մեխանիզմի միջոցով ֆունկցիոնալ կապ է ստեղծում բաքում եղած կերի քանակի եւ ելքի կարգավորող փականի բացվածքի միջեւ: Ապահովվում է դիրտի հավասարաչափ բաշխումը, 3 նկ.:

- (51) 7 A01K 17/00 (11) 1235 (13) A2
- (21) P20020079 (22) 17.05.2002
- (42) 16.07.2002
- (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
- (72) Հեկտոր Հարությունյան (AM), Յուրի Արովյան (AM), Հայկ Կարապետյան (AM), Օլեգ Բալասանյան (AM), Անդրանիկ Հարությունյան (AM)
- (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Եղջերահատման ունեյի**
(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես վիրաբուժական գործիքներին եւ կարող է օգտագործվել եղջերահատման համար: Եղջերահատման ունեյին բաղկացած է շրջանակաձեւ հիմքից, որը միաժամանակ հանդիսանում է անշարժ սայրի ամրանը եւ ուղղորդիչը շարժական սայրի համար: Շարժական սայրն ունի երկկողմանի ատամնաձող, որը կառչման մեջ է բռնակներ ունեցող ատամնավոր սեկտորների հետ: Սեկտորների պտտման առանցքները անցնում են հիմքի բլթանցքներով: Սեկտորի բռնակները մոտեցնելիս շարժական սայրը մոտենում է անշարժ սայրին եւ կատարում նրանց միջեւ տեղակայված եղջյուրի ծայրատում:

Բարձրացվում է աշխատանքի հարմարավետությունը եւ ապահովվում անվտանգությունը, 3 նկ.:

- (51) 7 A01N 37/12 (11) 1236 (13) A2
- C08F 20/02
- (21) P20020078 (22) 17.05.2002
- (42) 16.07.2002
- (71) Նինա Թավաքալյան (AM), Էռնեստ Հարությունյան (AM)
- (72) Նինա Թավաքալյան (AM), Էռնեստ Հարությունյան (AM), Կիմիկ Դիլբարյան (AM), Եկատերինա Նահապետյան (AM), Սիլվա Խեչոյան (AM), Անդրանիկ Մակարյան (AM)
- (73) Նինա Թավաքալյան (AM), Էռնեստ Հարությունյան (AM)
- (74) Ն. Թումանյան
- (54) **Բույսերի տզերի եւ միջատների դեմ պայքարի միջոց**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ պտղաբույսերի եւ այլ բույսերի վնասատուների՝ բուսական տզերի եւ միջատների դեմ պայքարի միջոցներին:

Միջոցը պարունակում է (զանգվ.%) վինիլացետատի համապոլիմերի ջրային դիսպերսիա (չոր մնացորդ՝ 20-45 զանգվ.%) - 3,0 - 4,0 եւ ջուր՝ մնացածը: Որպես վինիլացետատային համապոլիմեր վերցնում են 70-94 զանգվ.% վինիլացետատի շղթաներով վինիլացետատի եւ ակրիլա- կան մեթակրիլաթթվի երկակի հա- մապո-

լիմերը կամ վինիլացետատի, ակրիլամիդի եւ ակրիլա- կամ մեթակրիլաթթվի եռահամապո- լիմերը:

Միջոցի կիրառումը ապահովում է բույսերի պաշտպանությունը մի շարք վնասատուներից՝ վերջիններիս զարգացման տարբեր փուլերում, բուսաճի տարբեր ժամանակահատվածներում:

(51) 7 A21D 15/00 (11) 1237 (13) A2
(21) P20020119 (22) 01.07.2002
(42) 16.08.2002

- (71) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (72) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (73) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (74) Ա. Պետրոսյան
- (54) **Հացի պիտանիության ժամկետի երկարա- ձգման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է խմորեղենի, մասնավորապես հացի պահպանմանը փչացումից եւ կարող է կիրառվել հացաթխվածքների արտադրության մեջ:

Պատրաստի հացը մատուցում են անօդանցիկ փաթեթ՝ զազակերպ ազոտի եւ արգոնի խարնուրդի հոսքով՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակ- ցությամբ (զանգվ. %)

ազոտ 80-85
արգոն 15-20:

Փաթեթի փչահարումը գազային խարնուրդի հոսքով կատարում են 0.5-1 թուպե տետոդությամբ, ընդ որում փաթեթի հերմիտիկացումից առաջ փաթեթ են ներմուծում հակամեխական բուրավետ նյութի՝ օրինակ՝ ցորենի լուծամզուրի 0.05-0.1%-անոց էթիլ սպիրտային լուծույթի 1-2 կաթիլ:

Նվազեցվում են արտադրության ծախսերը:

(51) 7 A23B 7/148 (11) 1238 (13) A2
(21) P20020117 (22) 25.06.2002
(42) 16.07.2002

- (71) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (72) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (73) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (74) Ա. Պետրոսյան
- (54) **Գյուղատնտեսական մթերքների պահպանման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը ու սննդի արդյունաբերությանը եւ կարող է կիրառվել գյուղատնտեսական մթերքների, առավելապես, մրգերի երկարատե պահպանման համար:

Գյուղատնտեսական մթերքների պահպանման եղանակում փակ պահոցի սկզբնական գազային միջավայրը սառեցնում են մինչեւ 0-4°C, պահում են մթերքը այդ միջավայրում եւ հետագա պահ- ման ընթացքում ապահովում են պահոցի հեր-

մետիկությունը, իսկ որպես սկզբնական գազային միջավայր օգտագործում են 94-95% ազոտ եւ 5-6% թթվածին պարունակող գազային խառնուրդ:

Երկարաձգվում է մթերքների պահպանման ժամկետը:

(51) 7 A24D 1/18 (11) 1239 (13) A2
A24F 47/00
A61M 15/06

(21) P20020144 (22) 19.08.2002
(42) 16.09.2002

- (71) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (72) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (73) Հայկագունի Անդրեսայան (AM)
- (74) Ա. Պետրոսյան
- (54) **Սիգարետ նմանակող ներշնչման սարք**

(57) Գյուտը վերաբերում է սիգարետի ձեւ ունեցող ներշնչման սարքերին եւ կարող է կիրառվել սիգարետ ծխելու նմանակման պատրաստվածք- ների արտադրության մեջ, որտեղ օգտագործվում են ծխախտոցի տարբերվող նյութեր:

Սարքը պարունակում է սովորական սիգարետի տեսք եւ չափեր ունեցող գլանաձեւ իրան, որը կատարված է մամլված փքած պեռլիտից՝ ներծծված հոտանյութով եւ փաթաթված ծխախտաթղթով: Իրանն ունի կոնաձեւ խոռոչ, որը լայնանում է դեպի իրանի մուտքային ծայրը: Խոռոչի մեջ ներդրված է նիկոտինով ներծծված եւ կալցիումի օքսիդի ու քրոմի օքսիդի (VI) խառնուրդով փոշեվորված ապակեթելք, ընդ որում կալցիումի օքսիդի եւ քրոմի օքսիդի (VI) քանակությունները այդ խառնուրդում հավասար են: Իրանի մուտքային անցքում տեղադրված է ծակոտկեն խեցեգործական գլխադիր, որի արտաքին տեսքը նմանակում է սովորական սիգարետի այրվող ծայրը, իսկ իրանի ելքային ծայրին ամրակցված է ացետատային գոտի: Բարձրացվում է սիգարետի նմանակման աստիճանը, I նկ.:

(51) 7 A24D 3/02 (11) 1240 (13) A2
(21) P20020069 (22) 30.04.2002
(42) 16.07.2002

- (71) Սիմոն Պողոսյան (AM)
- (72) Սիմոն Պողոսյան (AM)
- (73) Սիմոն Պողոսյան (AM)
- (74) Ա. Պետրոսյան
- (54) **Ծխախտային պատրաստվածքների գոտիչի ստացման սարք եւ եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է ծխախտային պատ- րաստվածքների արտադրությանը, մասնավորապես՝ գոտիչների պատրաստման սարքին եւ եղանակին:

Սարքն ունի համառանցք տեղակայված մուտքային փողալայնուկ, համապատասխան

ջերմաստիճան ունեցող ուղղորդիչ ականոցներ եւ ականոցների անցքից փոքր տրամագծով ցցաձող, որն ունի հետադարձ-առաջընթաց շարժման հնարավորություն:

Պլաստիկացված ացետիլթաղանթանյութի թելքն անցկացնում են մուտքային խողովակի ու ուղղորդիչ ականոցների միջով՝ ձեւավորելով գտիչ կեմը: Կեմի շարժման ընթացքում ցցաձողին հաղորդում են հետադարձ-առաջընթաց շարժում, որի հետադարձ շարժման ընթացքում ցցաձողի ծայրը դուրս են հանում փողալայնուկին հաջորդող ականոցի անցքից:

Ստացվում է իրար հաջորդող հոծ եւ խողովակաձեւ հատվածներով կեմ, որը կտրատում են համապատասխան երկարությամբ հատվածների:

- (51) 7 A61B 5/00 (11) 1241 (13) A1
- (21) P20000064 (22) 14.07.2000
- (42) 17.04.2001
- (31) 09/354631 (32) 16.07.1999 (33) US

(71) Մայքրոսենս Կարդիովասկուլյար Սիսթեմզ (1996) Լքդ (IL)

(72) Շեյ Կապլան (IL)

(73) Մայքրոսենս Կարդիովասկուլյար Սիսթեմզ (1996) Լքդ (IL)

(74) Հ. Դավթյան

(54) **Մարմնի խոռոչում ներդրման սարք**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ մարմնի խոռոչում ներդրվող սարքերին:

Սարքն ունի մեխանիկորեն տատանելի թաղանթով տվիչ եւ պաշտպանիչ շերտ, որը նստեցված է, առնվազն, թաղանթի վրա: Պաշտպանիչ շերտը կարող է պատրաստվել բազմաքսիլիլեն պոլիմերային կամ սիլիկոնային ռետինե կամ բազմաքառֆտորէթիլենային նյութից: Տվիչը կարող է ունենալ մշտական պաշտպանիչ շերտ եւ/կամ ժամանակավոր պաշտպանիչ ծածկույթ:

Նշված սարքը գույգվում է սեւեռակման սարքին եւ ներդրվում մարմնի խոռոչում: Սեւեռակման սարքը, օրինակ՝ ստենտ է կամ հատուկ նախատեսված օղակ: Մարմնի խոռոչում սարքը կարող է ամրացվել տարբեր եղանակներով, օրինակ՝ կարելու միջոցով, 3 անկախ կետ, 16 նկ.:

- (51) 7 A61B 10/00 (11) 1242 (13) A2
- A61D 1/00
- (21) P20020071 (22) 07.05.2002
- (42) 16.07.2002

(71) Վրեժ Խոցանյան (AM)

(72) Վրեժ Խոցանյան (AM)

(73) Վրեժ Խոցանյան, Կոտայքի մարզ, Աբովյանի ենթաշրջան, գ.Ձորաղբյուր (AM)

(54) **Կարունկուլահատ**

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես վիրաբուժական գործիքներին

եւ կարող է օգտագործվել հիստոմորֆոլոգիական հետազոտությունների նպատակով ծննդաբերած կովերի արգանդից կարունկուլա-կատելիդոնային հանգույցների նմուշներ վերցնելու, ինչպես նաեւ կենսազննման համար:

Կարունկուլահատն ունի աշխատանքային եզրերով երկու աքցանաբունիչ շուրթեր եւ նրանց հողակապորեն միացված բռնիչներ: Աքցանաբունիչ շուրթերն աղեղնաձեւ են, շուրթերից մեկի աշխատանքային եզրը գույգված է եւ այդ ճյուղերից մեկի սրման անկյունը սուր է, մյուսինը՝ բութ, իսկ երկրորդ աքցանաբունիչ շուրթի աշխատանքային եզրը տեղակայված է առաջին աքցանաբունիչ շուրթի ճյուղերի միջեւ եւ սրված է նրանց նկատմամբ հակառակ ուղղությամբ: Գործիքն ապահովում է հյուսվածքի արտահատումը առանց մորֆոլոգիական փոփոխությունների, կանխարգելում է արյունահոսությունը եւ չի վնասում սերնդի հետագա վերարտադրությանը, 4 նկ.:

- (51) 7 A61B 17/00 (11) 1243 (13) A2
- (21) P20020107 (22) 13.06.2002
- (42) 16.08.2002

(71) Հայկական բժշկական ինստիտուտ (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM)

(73) Հայկական բժշկական ինստիտուտ, Երևան, Այվազովսկու 131(AM)

(54) **Ստորին ծնոտի ընտելական հողախախտի վիրահատական բուժման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես ստորին ծնոտի ընտելական հողախախտի վիրահատական բուժման եղանակներին:

Բուժման համար մերկացնում են այտային աղեղն ու հողաթմբի շրջանը եւ բարձրացնում հողաթումբը: Այտային աղեղի ստորին եզրի շրջանում, հողաթմբի մոտ, տեղադրում են կորտիկալ ոսկրային մատրիքս, որը սեւեռում են երկու ոսկրակարով:

Հեշտացվում է վիրահատական միջամտության տեխնիկան, 2 նկ.:

- (51) 7 A61B 17/00 (11) 1244 (13) A2
- (21) P20020106 (22) 13.06.2002
- (42) 16.08.2002

(71) Հայկական բժշկական ինստիտուտ (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM)

(73) Հայկական բժշկական ինստիտուտ, Երևան, Այվազովսկու 131 (AM)

(54) **Ստորին ծնոտի օստեոսինթեզի եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես, ստորին ծնոտի օստեոսինթեզի եղանակներին:

Եղանակը կայանում է նրանում, որ մերկացնում եւ վերատեղադրում են ոսկրային բեկորները, կատարում ոսկրաշաղափում եւ մետաղալարե ոսկրակարով սեւեռում:

Ծայրատի հիմքի շրջանում շաղափում են ծայրատի երկարությանը եւ հաստությանը համապատասխան ակոս, որի մեջ ընկղմում են ոսկրակարի ծայրատը, ծռելով դրան դեպի ոսկորը:

Վերացվում է փափուկ հյուսվածքների վնասումը:

(51) 7 A61B 17/00 (11) 1245 (13) A2

(21) P20020108 (22) 13.06.2002

(42) 16.08.2002

(71) Հայկական բժշկական ինստիտուտ (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM)

(73) Հայկական Բժշկական Ինստիտուտ, Երևան, Այվազովսկու 131(AM)

(54) **Այտային աղեղի շրջան վիրաբուժական մուտքի եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է դիմաձնոտային վիրաբուժությանը, մասնավորապես, դեպի այտային աղեղի շրջան վիրաբուժական մուտքի եղանակներին:

Այտային աղեղը մերկացնելու նպատակով կատարում են առաջականջային կտրվածք, որն ակնաջախեցու կաման վերին կետից շարունակում են դեպի վեր եւ առաջ՝ 125-130° անկյան տակ, առաջականջային կտրվածքի 1/2 երկարության չափով, որից հետո սուր եղանակով անջատում մաշկը եւ ենթամաշկային ճարպաշրջանային բջջանքը մինչեւ այտոսկրը՝ չվնասելով քունքային եւ հարականջածամողական փակեղները: Այտային աղեղը մերկացնելու նպատակով կատարում են եւս մեկ կտրվածք 2,5-3,0 սմ երկարությամբ, այտային աղեղի պրոյեկցիայով, հատելով հարականջածամողական փակեղը եւ այտային աղեղը պատող վերնոսկրը, բացելով մուտք դեպի այտային աղեղը:

Ապահովվում է վիրաբուժական մուտքի արդյունավետությունը՝ տեսողական հսկողության տակ տարբերակելով դիմային նյարդի ճյուղերը եւ ստեղծելով այտային աղեղի վրա վիրահատական միջամտություն իրականացնելու համար ազատ դաշտ, 2 նկար:

(51) 7 A61B 17/00 (11) 1246 (13) A2

(21) P20020105 (22) 13.06.2002

(42) 16.08.2002

(71) Հայկական բժշկական ինստիտուտ (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM)

(73) Հայկական բժշկական ինստիտուտ, Երևան, Այվազովսկու 131 (AM)

(54) **Ստորին ծնոտի կտրվածքների բուժման սարք**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես, ստորին ծնոտի կտրվածքների վիրաբուժական սարքերին:

Սարքն ունի պտուտակամեխեր, որոնք միացնող հանգույցների միջոցով սեւեռված են տանող ձողի վրա: Ձողը կարող է լինել ուղիղ, անկյունաձեւ կամ աղեղնաձեւ: Ձողի ու պտուտակամեխերի ոչ պարուրավոր մասերը կլոր են: Յուրաքանչյուր բեկորի մեջ ներպտուտակում են երկու պտուտակամեխ՝ ընդգրկելով ծնոտի ոսկրերի արտաքին եւ ներքին կեղեւային շերտերը:

Բարձրացվում է բեկորների սեւեռման հուսալիությունը ռեպարատիվ վերականգնման ողջ ընթացքում, 2 նկ.:

(51) 7 A61D 3/00 (11) 1247 (13) A2

(21) P20020072 (22) 07.05.2002

(42) 16.07.2002

(71) Հեկտոր Հարությունյան (AM)

(72) Հեկտոր Հարությունյան (AM)

(73) Հեկտոր Հարությունյան, Երևան, Արաբկիրի 21փ., շենք 1, բն.44 (AM)

(54) **Խոշոր կենդանիների վիրահատման սեղան**

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես խոշոր կենդանիների վիրահատման սեղաններին:

Խոշոր կենդանիների վիրահատման սեղանը բաղկացած է հիմքին ուղղահայաց ամրակման աղեղից, անշարժ ամրացված գույգ հենակներով կմախքից եւ անշարժ հենակների վրա տեղակայված հարթակից, որն ունի հիդրավիլիկ համակարգ: Հարթակը երկու կողմերից ունի միմյանցից անկախ կարդանային կցորդմամբ լծակասողանային ատամնաձողավոր տեղաշարժման մեխանիզմ՝ շարժաբերներով: Հարթակի ուղղաձիգ դիրքում ապահովվում է կենդանու դիրքի փոփոխությունը ըստ բարձրության, իսկ հորիզոնական դիրքում՝ հորիզոնական հարթության մեջ:

Բարձրացվում է աշխատանքի հարմարավետությունը եւ սեղանի հուսալիությունը, 9 նկ.:

(51) 7 A61F 2/06 (11) 1248 (13) A1

(21) P20010068 (22) 29.05.2001

(42) 17.10.2001

(31) 09/583363 (32) 30.05.2000 (33) US

(71) Ջյուլի Հոլդինգս Լթդ. (IL)

(72) Յակոբ Ռիխտեր (IL)

(73) Ջյուլի Հոլդինգս Լթդ. (IL)

(74) Հ. Դավթյան

(54) **Արյունատար անոթով հոսող մակարդուկների հավաքման սարք եւ եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային եւ նախատեսված է բուժման ենթակա արյունատար անոթներից մակարդուկները հավաքելու եւ հեռացնելու համար:

Սարքն ունի շարժիչ, որի երկայնական անցքում տեղադրված է ուղղորդ լար: Ուղղորդ լարը եւ

շարժիչի երկայնական անցքը չափաբերված եւ հարմարեցված են այնպես, որ ապահովվի միմյանց հպումը եւ ուղղորդ լարի ու շարժիչի անցքի շփման գոտու միջեւ շփումը՝ հնարավորություն տալով շարժիչին փոխել դիրքը ուղղորդ լարի նկատմամբ՝ պտտվելով նրա շուրջը: Շարժիչին կցված են մակարդուկների հավաքման ճոռ եւ թիակներ: Շարժիչի պտտման ժամանակ թիակները առաջացնում են արյան պարուրածեւ հոսք, որի ընթացքում արյան մեջ եղած մակարդուկները ուղղվում են դեպի անոթի ներքին պատերը եւ հավաքվում ճոռի մեջ, որը շարժիչի վրա տեղադրված է թիակների շարժման ուղղությամբ: 6 անկախ կատ, 10 նկ.:

- (51) 7 A61M 29/02 (11) 1249 (13) A1
- (21) P20010042 (22) 22.03.2001
- (42) 17.10.2001
- (31) 09/532653 (32) 22.03.2000 (33) US
- (71) Ջյուլի Հոլդինգս Լթդ. (IL)
- (72) Յակոբ Ռիխտեր (IL)
- (73) Ջյուլի Հոլդինգս Լթդ. (IL)
- (74) Հ. Դավթյան
- (54) **Պատված ստենտ եւ դրա պատրաստման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես, մարմնի տարբեր խոռոչներում ներդրվող կենսաբանական նյութով պատված ստենտներին:

Ստենտի պատվածքը պատրաստված է միա-հյուսված կենսաբանական մանրաթելերից: Ստենտի երկայնական առանցքի նկատմամբ մանրաթելերը կազմում են որոշակի անկյուն, որը ստենտի ընդարձակման ժամանակ մեծանում է: Ստենտի շուրջը պտուտակաձեւ կարող է փաթաթվել սրտապարկի շերտը: Ստենտի ընդարձակման ժամանակ շերտը քանդվում է, սակայն պատվածքը լրիվ պահպանվում է: Ընդ որում ստենտի պատվածքը լրիվ ապահովելու համար սրտապարկի շերտի վրա կարող են ձեւավորվել միմյանց կապվող եզրեր: 5 անկախ կետ, 7 նկ.:

- (51) 7 B02C 23/08 (11) 1250 (13) A2
- B02C 23/24
- (21) P20020080 (22) 22.05.2002
- (42) 16.09.2002
- (71) Ալբերտ Պոդոսյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Տիգրան Մարտիրոսյան (AM)
- (72) Ալբերտ Պոդոսյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Տիգրան Մարտիրոսյան (AM)
- (73) Ալբերտ Պոդոսյան, Երեւան, Պուշկինի 60, բն. 66 (AM), Վիկտոր Մակարյան, Երեւան, Բաբայան 28, բն. 29 (AM), Տիգրան Մարտիրոսյան, Երեւան, Ա. Տիգրանյան 5/1, բն. 15 (AM)

(54) **Փոշիների նանոչափային ֆրակցիաների ստացման սարք**

(57) Գյուտը վերաբերում է քիմիական արդյունաբերությանը, մասնավորապես՝ մանրադիսպերս միներալների փոշու զանգվածից նանոչափային ֆրակցիաների անջատման սարքերին:

Սարքն ունի առանձին սեկցիաներից կազմված խողովակաձեւ իրան, որի ստորին մասը զլանաձեւ է, իսկ վերին մասը՝ մեծ տրամագծով դեպի վեր ուղղված հատած կոն: Իրանի ստորին ու վերին մասերը միացված են թասաձեւ պարզարանների միջոցով՝ փոշու վերնթացող մասնիկների հավաքման համար: Իրանի ստորին մասում տեղակայված է շարժաբերի հետ կիներմատիկորեն կապված մաղ եւ օդի մատուցման խողովակառոտեր: Օդ մատուցող խողովակառոտերի ու մաղի միջեւ, ինչպես նաեւ վերին նանոչափային ու ստորին միկրոչափային պարզարանների միջեւ տեղակայված են գոլիներ, որոնք օդի հոսքի լամինարությունը եւ հավասարությունը ապահովող մանրադիսպերս ցանցեր են: Համանման ցանցեր տեղակայված են իրանի միջին մասում՝ նանոչափային եւ միկրոնային պարզարանների միջեւ: Սարքն ունի նաեւ մասնիկների հոսքի գրանցման տվիչ, 2նկ.:

- (51) 7 B60T 17/22 (11) 1251 (13) A2
- (21) P20020077 (22) 17.05.2002
- (42) 16.07.2002
- (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
- (72) Նորիկ Բազիկյան (AM), Ռազմիկ Բալայան (AM), Ալեքսանդր Միմոնյան (AM)
- (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Տրանսպորտային միջոցների արգելակային թմբուկների արատորոշման սարք**

(57) Գյուտը վերաբերում է պնեմատիկական հաղորդակով արգելակային համակարգ ունեցող տրանսպորտային միջոցների արգելակային թմբուկների արատորոշման սարքերին:

Սարքն ունի արգելակային կոճղակներից կազմված բեռնավորման հարմարանք, արգելակային կոճղակների տեղափոխման մեխանիզմ, չափիչ սարք եւ երկու էլեկտրամագնիս, որոնց զսպանակված միջուկի ազատ ծայրերը հպվում են կոճղակների ներքին մակերեսներին, իսկ կոճերի գալարների ծայրերը միացված են չափիչ սարքին:

Բարձրացվում է արգելակային թմբուկի տեխնիկական վիճակի որոշման ճշտությունը, կրճատվում է աշխատատարությունը, 2 նկ.:

- (51) 7 B64B 1/06 (11) 1252 (13) A2
- B64B 1/14
- (21) P20020052 (22) 15.04.2002
- (42) 16.07.2002

- (71) Ջուզատ Ավագյան (AM)
- (72) Ջուզատ Ավագյան (AM)
- (73) Ջուզատ Ավագյան (AM)
- (74) Ա. Պետրոսյան
- (54) **Գիրիժարլ**

(57) Գյուտը վերաբերում է օդից թեթև թռչող ապարատներին, մասնավորապես կոշտ կառուցվածքի հիմնականախթ եւ վակուումացված խոռոչ ունեցող դիրիժաբլներին:

Հիմնականախթի հեծանները պատրաստված են ածխաթելքերով ամրանավորված կոմպոզիցիոն նյութից, իսկ արտաքին ծածկույթը արամիդե թաղանթ է: Հեծանների միջեւ տեղադրված են ածխաթելքերով ամրանավորված կոմպոզիցիոն նյութից պատրաստված պատվածքի սալիկներ, որոնք եզրերով սոսնձված կամ եռակցված են հարակից սալիկների եզրերին՝ կազմելով պատվածքի ամբողջական մակերեսույթ: Պատվածքի սալիկները ծակոտված են, ծակոտիները 4-6 սմ մակերես ունեցող վեցանկյուններ են, որոնց կողմերի միջեւ հեռավորությունը կազմում է 0,35-0,5 սմ: Բարձրանում է հիմնականախթի կոշտությունը եւ դիրիժաբլի բեռնամբարձությունը, 3 նկ.:

- (51) 7 C01B 33/16 (11) 1253 (13) A2
- (21) P20020098 (22) 04.06.2002
- (42) 16.08.2002

- (71) Սերգեյ Հայրապետյան (AM)
- (72) Սերգեյ Հայրապետյան (AM), Համբարձում Խաչատրյան (AM)

(73) Սերգեյ Հայրապետյան, Երևան, Չեռնիշեւսկու 58, բն. 1 (AM)

- (54) **Ոչ ծակոտկեն միկրոգնդային սիլիկատելի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես, հեղուկային քրոմատագրության համար ոչ ծակոտկեն կրողների ստացման եղանակներին:

Սիկրոգնդային սիլիկատելի մակերեսույթին նատրիումի հիդրօքսիդի էթանոլացետոնային լուծույթից նստեցնում են նատրիումի օքսիդ, որից հետո սիլիկատելը ենթարկում են թրծման 1000°C ջերմաստիճանում:

Կրճատվում է պրոցեսի տեսողությունը:

- (51) 7 C03C 3/22 (11) 1254 (13) A2
- (21) P20020118 (22) 25.06.2002
- (42) 16.07.2002

- (71) Ռուզաննա Ավետյան (AM)
- (72) Ռուզաննա Ավետյան (AM), Ռուդոլֆ Օհանյան (AM), Կոստան Կոստանյան (AM)

(73) Ռուզաննա Ավետյան, Երևան, Թադեւոսյան 2, բն. 24 (AM)

- (54) **Ապակի ապակեբյուրեղային նյութի համար**

(57) Գյուտը վերաբերում է ապակու բաղադրություններին, որոնք հիմք են հանդիսանում ապակեբյուրեղային նյութերի ստացման համար

եւ կարող են կիրառվել շենքերի, շինությունների ներքին եւ արտաքին երեսպատման շինարարական դեկորատիվ նյութերի, մաշակայուն հատակածածկի արտադրության մեջ:

Ապակին պարունակում է օքսիդներ, իոններ եւ գունավորող օքսիդներ, բաղադրանյութերի հետեւյալ հարաբերությամբ(զանգվ.%)

<i>սիլիցիումի օքսիդ</i>	42.0-57.5
<i>ալյումինի օքսիդ</i>	5.1-9.8
<i>կալցիումի օքսիդ</i>	16.5-29.5
<i>մագնեզիումի օքսիդ</i>	10.2-18.5
<i>նայրիումի օքսիդ</i>	1.5-5.2
<i>կալիումի օքսիդ</i>	1.7-3.0
<i>ֆորոի իոն</i>	0.5-2.2
<i>ծծնքի իոն</i>	0.1-0.4
<i>ցինկի օքսիդ</i>	0.3-1.6
<i>երկաթի (III) օքսիդ</i>	0.5-1.1
<i>գունավորող օքսիդներ</i>	0.05-1.2:

Հնարավորություն է ստեղծվում ստանալ գրանիտանման ֆակտուրայով, ելակետային ապակու եփման եւ ջերմամշակման ցածր ջերմաստիճաններ ունեցող, ինչպես նաեւ միկրոկարծրության եւ մաշակայունության բարձր արժեքներով ապակեբյուրեղային նյութ:

- (51) 7 C04B 35/00 (11) 1255 (13) A2
- H01B 12/00**

(21) P20020099 (22) 05.06.2002

(42) 16.08.2002

- (71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան(AM)
- (72) Անահիտ Տոնոյան (AM), Սուրեն Հայրապետյան (AM), Լիանա Մանուկյան (AM), Սեւան Դավթյան (AM)

(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)

- (54) **Հոսանքակիր բարձրաջերմաստիճան գերհաղորդիչ պոլիմեր-խեցե բաղադրանյութի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է հոսանքակիր բարձր ջերմաստիճան գերհաղորդիչ (ԲՋՀ) պոլիմեր-խեցե բաղադրանյութի ստացմանը եւ կարող է օգտագործվել գրոյական դիմադրությամբ նյութերի, մասնավորապես, գերհաղորդիչ իրերի ստացման համար:

Ըստ եղանակի կաղապարում են $Y_1Ba_2Cu_3O_{6.97}$ կամ $Bi_2Sr_2CaCu_2O_8$ եւ կապակցանյութը, ընդ որում որպես կապակցանյութ օգտագործում են պոլիմերային մատրիցներ: Իրականացման տարբերակներից մեկում կապակցանյութը կազմում է 1-4 զանգ.%, կաղապարումը իրականացնում են 180-200°C ջերմաստիճանում եւ մամլում են 4-6 րոպեի ընթացքում, իսկ մյուս տարբերակում՝

ներմուծում են կոլոիդային մետաղների փոշիներ, կապակցանյութը կազմում է 5-10 զանգ.%, կադապարումը իրականացնում են 130-150°C ջերմաստիճանում և մամլում են 15 րոպեի ընթացքում:

(51) 7 C04F 11/04 (11) 1256 (13) A2
C02F 3/28
C12M 1/02

(21) P20020082 (22) 24.05.2002
(42) 16.07.2002

(71) Հենրիկ Գուկասյան (AM), Համազասպ Գուկասյան (AM)

(72) Հենրիկ Գուկասյան (AM), Համազասպ Գուկասյան (AM), Էդմոն Մանուկյան (AM), Սերիկ Մանուկյան (AM), Հակոբ Սանասարյան (AM), Արմեն Մարգարյան (AM)

(73) Հենրիկ Գուկասյան, Երեւան Փափազյան 21, քմ. 61 (AM), Համազասպ Գուկասյան, Երեւան, Մառի նրբ.8, քմ. 8 (AM)

(54) Օրգանական թափոնների անաերոբ խմորման կայանք

(57) Գյուտը վերաբերում է օրգանական թափոնների անաերոբ խմորման կայանքներին և կարող է օգտագործվել գյուղատնտեսական, սննդարդյունաբերական, ինչպես նաև կենցաղային թափոնների կենսաքիմիական մշակմամբ կենսազագ եւ բնապահպանորեն մաքուր պարարտանյութ ստանալու համար:

Կայանքը բաղկացած է սնուցման, արտահոսքի, դատարկման և գազահեռացման խողովակներ, ջերմաչափման և ջերմակարգավորման սարքեր ունեցող ջերմամեկուսացված ռեզերվուարից: Ռեզերվուարը լրացուցիչ պարունակում է կենտրոնում տեղակայված հակապայթյունային սարք ունեցող գազահավաք թմբուկ, գազահավաք բացվածքներ ունեցող պարուրագծային միջնորմ, կառավարման զոնդերին միացված ջեռուցման գալարախողովակներ և ռեզերվուարի ստորին մասում տեղակայված գազապղպջակավորման խողովակների ցանց, ինչպես նաև ռեզերվուարի պատերի ներքին մակերեսային լվացման խողովակներ, ընդ որում կառավարման զոնդերն ունեն ջերմակարգավորիչ կափույր:

Աճում է կայանքի արտադրողականությունը, նկ. 3:

(51) 7 C07F 15/04 (11) 1257 (13) A2
(21) P20020074 (22) 14.05.2002
(42) 16.07.2002

(71) Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ ՓԲԸ (AM)

(72) Աշոտ Սաղյան (AM), Արփինե Գեոլչանյան (AM), Յուրի Բելոկոն (RU)

(73) Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ ՓԲԸ, Երեւան, Գյուրջյան 14 (AM)

(54) Գեփիդրոլանինի և (S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինաբենզոֆենոնի Շիֆի հիմքի Ni(II) քիրալային կոմպլեքսի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ոչ սպիտակուցային բնույթի բետա-տեղակալված ալֆա-ամինաթթուների ասիմետրիկ կենսասինթեզի բնագավառին, մասնավորապես, դեփիդրոլանինի և (S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ) ամինաբենզոֆենոնի Շիֆի հիմքի Ni(II) քիրալային կոմպլեքսի ստացման եղանակներին:

Գլիցինի համապատասխան կոմպլեքսը լուծում են նատրիումի մեթիլատի մեջ և ենթարկում փոխազդեցության պարաֆորմի հետ՝ ստանալով (R) -սերինի քիրալային կոմպլեքս, ապա այդ կոմպլեքսը ացետիլավորում են քացախանիդրիդով ացետոնիտրիլի առկայությամբ՝ ստանալով O-ացետիլսերին, որից հետո O-ացետիլսերինի մնացորդը ջրածնազերծում են՝ ստանալով դեփիդրոլանինի և (S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ) ամինաբենզոֆենոնի Շիֆի հիմքի Ni(II) քիրալային կոմպլեքսը:

(R) -սերինի կոմպլեքսի ստացման փուլում գլիցինի կոմպլեքսի, պարաֆորմի և 1,47 նորմալանոց նատրիումի մեթիլատի զանգվ. հարաբերակցությունը 1,0:0,21:2,0 է, իսկ դեփիդրոլանինի կոմպլեքսի ստացման փուլում (R) -սերինի կոմպլեքսի, ացետոնիտրիլի, քացախանիդրիդի և նատրիումի կարբոնատի զանգվ. հարաբերակցությունը 1,0:6,3:0,65:0,43 է:

Պարզեցվում է ստացման եղանակը, բարձրանում արգասիքի ելքը:

(51) 7 C08F 226/10 (11) 1258 (13) A2
A61K 31/395

(21) P20020044 (22) 03.04.2002
(42) 16.06.2002

(71) Լավրենտի Հայրիյան (AM), Վիտուշ Սարգսյան (AM), Ջոյա Ֆարմազյան (AM)

(72) Լավրենտի Հայրիյան (AM), Վիտուշ Սարգսյան (AM), Ջոյա Ֆարմազյան (AM), Վայա Հովհաննիսյան (AM), Արեւ Այրիյան (AM), Ռիմա Սուկասյան (AM)

(73) Լավրենտի Հայրիյան (AM), Վիտուշ Սարգսյան (AM), Ջոյա Ֆարմազյան (AM)

(74) Ն. Թումանյան

(54) Հակաընկճվածության ակտիվություն ունեցող N-վինիլ-2-պիրոլիդոնի և մալեինաթթվի ածանցյալների ջրալուծելի համապոլիմերներ և դրանց ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բարձրամոլեկուլային միացություններին, մասնավորապես՝ հակաընկճվածության ակտիվություն ունեցող N-վինիլ-2-պիրոլիդոնի և մալեինաթթվի N,N-երկակիմեթիլմալեիլամիդաածանցյալների համապոլիմերներին և դրանց ստացման եղանակներին: Մոնոմերների համապոլիմերացումը կատարում են

N-վիճիլ-2-պիրոլիդոնի եւ մալեինաթթվի անհիդրիդի (4-5):1 մոլային հարաբերակցությամբ:

Ապահովվում է հակաընկճվածության ակտիվություն ունեցող դեղամիջոցների տեսականու ընդլայնումը, 2 անկախ կետ:

(51) 7 C09J 4/00 (11) 1259 (13) A2
C09J 11/04
C09J 131/08
C09J 167/00

(21) P20020061 (22) 25.04.2002
(42) 16.06.2002

(71) «Վերականգնում» ՍՊԸ(AM)
(72) Ալեքսանդր Մելիքսեթյան (AM), Նինել Գուրգենյան (AM), Հրանտ Բաբայան (AM)
(73) «Վերականգնում» ՍՊԸ, Վանաձոր, Գ. Լուսավորչի 25/1 (AM)

(54) **Բազմաէթերային սուսինձ**

(57) Գյուտը վերաբերում է բազմաէթերային սուսինձների բաղադրանյութերին եւ կարող է կիրառվել շինարարության մեջ, մասնավորապես՝ բնական եւ արհեստական քարերից պատրաստված շինարարական կառուցատարրերի սոսնձման համար:

Բազմաէթերային սուսինձը պարունակում է բազմաէթեր, արագարար, պնդարար եւ որպես անօրգանական լցիչ՝ բազալտների խմբի ապար, ինչպես նաեւ ջրազրկված ցեոլիթ՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

<i>բազմաէթեր</i>	<i>30,0-76,0</i>
<i>պնդարար</i>	<i>2,0-2,5</i>
<i>արագարար</i>	<i>1,0-1,5</i>
<i>բազալտների խմբի ապար</i>	<i>15,0-52,0</i>
<i>ջրազրկված ցեոլիթ</i>	<i>5,0-15,0</i>

Մեծանում է սոսնձման ամրությունը եւ շահագործման ժամկետը:

(51) 7 C09J 4/00 (11) 1260 (13) A2
C09J 167/00
C09J 131/08
C09J 11/04

(21) P20020063 (22) 25.04.2002
(42) 16.06.2002

(71) «Վերականգնում» ՍՊԸ(AM)
(72) Ալեքսանդր Մելիքսեթյան (AM), Նինել Գուրգենյան (AM), Հրանտ Բաբայան (AM)
(73) «Վերականգնում» ՍՊԸ, Վանաձոր, Գ. Լուսավորչի 25/1(AM)

(54) **Բազմաէթերային սուսինձ**

(57) Գյուտը վերաբերում է բազմաէթերային սուսինձների բաղադրանյութերին եւ կարող է կիրառվել շինարարության մեջ, մասնավորապես՝

բնական եւ արհեստական քարերից պատրաստված շինարարական կառուցատարրերի սոսնձման համար:

Բազմաէթերային սուսինձը պարունակում է բազմաէթեր, արագարար, պնդարար, անօրգանական լցիչ՝ կվարցային ավազ, ինչպես նաեւ ջրազրկված ցեոլիթ՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

<i>բազմաէթեր</i>	<i>30,0-76,0</i>
<i>պնդարար</i>	<i>2,0-2,5</i>
<i>արագարար</i>	<i>1,0-1,5</i>
<i>կվարցային ավազ</i>	<i>15,0-52,0</i>
<i>ջրազրկված ցեոլիթ</i>	<i>5,0-15,0</i>

Մեծանում է սոսնձման ամրությունը եւ շահագործման ժամկետը:

(51) 7 C12P 19/08 (11) 1261 (13) A2
C12R 1:04

(21) P20020109 (22) 19.06.2002
(42) 16.08.2002

(71) Մերքուրի Սփարք Լիմիթիդ (GB)
(72) Վարուժան Աբելյան (AM)
(73) Մերքուրի Սփարք Լիմիթիդ, Լոնդոն, Մելթոն սթրիթ 22 (GB)

(54) **Ալֆա-ցիկլադեքստրինի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես՝ ալֆա-ցիկլադեքստրինների մանրէաբանական սինթեզով ստացման եղանակներին:

Ցիկլադեքստրինգլյուկոնատրանսֆերազ արտադրող մանրէների շտամը աճեցնում են հեղուկ սննդամիջավայրում, զատում կուլտուրալ հեղուկից ֆերմենտը, ապա այն՝ որպես կենսակատալիզորդ, օգտագործում օսլայից ալֆա-ցիկլադեքստրինի կենսափոխարկման ռեակցիայում, ընդ որում ռեակցիան անցկացնում են 50-55°C ջերմաստիճանի պայմաններում, օրգանական լուծիչների բացակայությամբ: Որպես կենսակատալիզորդի աղբյուր օգտագործում են *Thermoactinomyces vulgaris* Act-8 (INMIA-3554) շտամ:

Ապահովվում է ալֆա-ցիկլադեքստրինի ելքի բարձրացումը 1,5 անգամ:

(51) 7 C13K 5/00 (11) 1262 (13) A2
A23C 21/00

(21) P20020110 (22) 19.06.2002
(42) 16.07.2002

(71) Մերքուրի Սփարք Լիմիթիդ (GB)
(72) Վարուժան Աբելյան (AM)
(73) Մերքուրի Սփարք Լիմիթիդ քոմփանի, Լոնդոն, Մելթոն սթրիթ 22 (GB)

(54) **Գալակտոօլիգոշաքարների ստացման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիայի բնագավառին, մասնավորապես, գալակտոօլիգոշաքարների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել սննդային արդյունաբերությունում որպես շաքարի փոխարինիչ:

Ելանյութը՝ լակտոզի 60-80%-անոց ջրային լուծույթը ենթարկում են տրանսգլիկոզիլացման բետա-գալակտոզիդազ ֆերմենտով 60-65°C ջերմաստիճանում, ապա ստացված արգասիքը՝ գալակտոօլիգոշաքարները աղազրկում, գունազրկում եւ խտացնում:

Լակտոզի 60-80%-անոց ջրային լուծույթը ստանում են կաթնաշիճուկի վերամշակմամբ ազատ կամ իմոբիլիզացված բետա-գալակտոզիդազով:

Բարձրանում են տրանսգլիկոզիլացման աստիճանը եւ արգասիքի ելքը, կրճատվում է պրոցեսի տեղությունը:

- (51) 7 C14C 11/00 (11) 1263 (13) A2
- (21) P20020102 (22) 10.06.2002
- (42) 16.08.2002
- (71) Սոկրատ Մարգարյան (AM)
- (72) Սոկրատ Մարգարյան (AM), Կարեն Մինասյան (AM)
- (73) Սոկրատ Մարգարյան, Երեւան, Գոգոլի 85, բն. 32 (AM)

(54) **Գունանյութային մածուկ**
(57) Գյուտը վերաբերում է կաշվի արդյունաբերությանը, մասնավորապես, գունանյութային մածուկներին եւ կարող է կիրառվել կաշվի վերջնամշակման բաղադրանյութի ստացման համար:

Գունանյութային մածուկը պարունակում է (զանգվ.%) հանքային գունանյութ՝ 30-50, թաղանթագոյացուցիչ՝ 20% -անոց լատեքս՝ 25-30, խտարար՝ 5-10, մակերեւութասակտիվ նյութ՝ 2-4, փրփրամարիչ՝ 1-1,5 եւ ջուր՝ մնացածը:

Բարձրանում են ծածկույթային թաղանթների բազմակի ճկման, հարակցման եւ ծածկելիության ցուցանիշները:

- (51) 7 C22B 13/02 (11) 1264 (13) A2
- (21) P20020133 (22) 11.07.2002
- (42) 16.09.2002
- (71) Արծրունի Սաֆարյան (AM)
- (72) Արծրունի Սաֆարյան (AM)
- (73) Արծրունի Սաֆարյան, Երեւան, Ներսիսյան 1, բն. 100 (AM)

(54) **Կապար պարունակող սուլֆատային նյութերի ջարդոնի վերամշակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է գունավոր մետաղների մետալուրգիային, մասնավորապես՝ ցածրորակ սուլֆատային հումքից կապարի ստացման եղանակներին:

Կապար պարունակող սուլֆատային նյութերի ջարդոնից, վառարանից որսված փոշուց, սննդի կամ փայտամշակման արդյունաբերության թափոններից եւ կծու նատրիումի 15-25%-անոց լուծույթից պատրաստում են բովախառնուրդ, բրիկետավորում այն եւ հալում 950-1050°C ջերմաստիճանում:

Պարզեցվում է տեխնոլոգիան եւ կրճատվում են ծախսերը:

- (51) 7 E05B 17/00 (11) 1265 (13) A2
- (21) P20020051 (22) 15.04.2002
- (42) 16.06.2002
- (71) Խաչատուր Քարտաշյան (AM)
- (72) Խաչատուր Քարտաշյան (AM), Ջոն Քարտաշյան (AM)
- (73) Խաչատուր Քարտաշյան, Երեւան, Նորքի 7-րդ զանգված 48, բն. 19 (AM)

(54) **Փականք**
(57) Գյուտը վերաբերում փականքներին, մասնավորապես, անկիզելի պահարանների, պահեստների, ինչպես նաեւ կախովի փականքներին:

Փականքն ունի իրանի մեջ տեղադրված սողնակ, գլանային մեխանիզմ եւ շարժաբեր: Սողնակի վրա արված է լայնական օղածե առվակ, շարժաբերը կեռածե է, դրա մեկ թելը կապված է գլանային մեխանիզմին, իսկ մյուսը գտնվում է սողնակի առվակի մեջ, 3 նկ.:

- (51) 7 E05B 27/00 (11) 1266 (13) A2
- (21) P20020097 (22) 03.06.2002
- (42) 16.08.2002
- (71) Խաչատուր Քարտաշյան (AM)
- (72) Խաչատուր Քարտաշյան (AM), Ջոն Քարտաշյան (AM)
- (73) Խաչատուր Քարտաշյան, Երեւան, Նորքի 7-րդ զանգված 48, բն. 19 (AM)

(54) **Փականք**
(57) Գյուտը վերաբերում է փակիչ սարքերին, մասնավորապես գլանային փականքներին:

Փականքն ունի կողային մակերեւույթի վրա երկայնական կտրվածքով բաժակ, որի մեջ տեղակայված են փակող սկավառակները՝ գաղտնիության փորակներով: Յուրաքանչյուր սկավառակի բանալու անցքի պատերի հենարանային մակերեւը պատրաստված է հակադիր դասավորված կորերի տեսքով, որոնք ունեն բանալու պտտման առանցքի նկատմամբ փոփոխական շառավիղներ եւ կապված են միմյանց երկու փորակով: Պտտվելով բաժակի մեջ, բանալին պտտող եւ պտտվող սկավառակների միջոցով, որոնք ունեն բանալու պրոֆիլին համապատասխան անցքեր, իր վրա է հավաքում փակող սկավառակները:

Բարձրացվում է փականքի հոսալիությունն եւ գաղտնիությունը, 6 նկ.:

(51) 7 **E06B 5/16** (11) **1267** (13) **A2**
E06B 3/20
E06B 3/66

(21) P20020026 (22) 19.07.2000
(86) PCT/EP00/06893, 19.07.2000
(85) 20.02.2002
(42) 15.05.2002

(31) 199 33 408.0 (32) 21.07.1999 (33) DE

(71) ԳՈՐՄԱ Գ-մբՀ + Քն. ԿԳ (DE)

(72) Վալտեր Գեգելգեգեր (AT)

(73) ԳՈՐՄԱ Գ-մբՀ + Քն. ԿԳ (DE)

(74) Հ. Մանուկյան

(54) Հակահրդեհային դուռ կամ հակահրդեհային պատուհան

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ կրակի եւ ծխի տարածումը կանխող հակահրդեհային դուռը կամ պատուհանին:

Հակահրդեհային դուռը կամ հակահրդեհային պատուհանը պատրաստված է հակահրդեհային արհեստական նյութից եւ ունի շարժուն շրջանակ եւ հրակայուն նյութից պատրաստված լցանյութ: Շարժուն շրջանակը մասնակիորեն կամ լրիվ շրջապատված է անշարժ շրջանակով:

Ապահովվում է կոնստրուկցիայի հուսալիությունը եւ ցածր ինքնարժեքը:

(51) 7 **F25D 23/12** (11) **1268** (13) **A2**
(21) P20020094 (22) 29.05.2002
(42) 16.07.2002

(71) Գայանե Շահնազարյան (AM)

(72) Գայանե Շահնազարյան (AM)

(73) Գայանե Շահնազարյան, Երեւան, Բագրատունյաց 18, բն.17 (AM)

(54) Հեղուկային հովացման համակարգ

(57) Գյուտը վերաբերում է հեղուկային հովացման համակարգերին եւ կարող է կիրառվել էլեկտրոնային սարքերի, մասնավորապես՝ համակարգիչների շահագործման ժամանակ:

Հեղուկային հովացման համակարգն ունի հեղուկի մղիչ եւ հովացուցիչ, որոնք խողովակներով միացված են ռադիատորին, եւ օդափոխիչ: Գյուտի համաձայն, օդափոխիչը կցված է ռադիատորին, իսկ հովացուցիչն ունի օվալաձեւ ակոսներ, ընդ որում, որպես հեղուկ օգտագործվում է ջրի եւ սպիրտի լուծույթ՝ 3:1 հարաբերակցությամբ:

Բարձրացվում է էլեկտրոնային սարքերի հովացման արդյունավետությունը, 1 նկ.:

(51) 7 **F26B 11/08** (11) **1269** (13) **A2**
(21) P20020095 (22) 29.05.2002
(42) 16.07.2002

(71) Ստեփան Խոյեցյան (AM), Գուրգեն Մարտիրոսյան (AM), Ռուբեն Շխիկյան (AM)

(72) Ստեփան Խոյեցյան (AM), Գուրգեն Մարտիրոսյան (AM), Ռուբեն Շխիկյան (AM)

(73) Ստեփան Խոյեցյան, Երեւան, Ա.Ավետիսյան 23, բն.9 (AM), Գուրգեն Մարտիրոսյան, Երեւան, Գոգոլի 5, բն.6 (AM), Ռուբեն Շխիկյան, Երեւան, Մոսկովյան 31, բն. 121(AM)

(54) Արեային չորանոց

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ պտղաբան-ջարեղենի եւ այլ մթերքների արեային չորացման սարքերին: Արեային չորանոցն ունի լուսաթափանց նյութից վերնամաս եւ կողապատեր, ցանցավոր հարթակներ, օդամղիչ, օդի քարշի խողովակներ, ջերմակուտակիչ: Գյուտի համաձայն, սարքը լրացուցիչ ունի ուղղաձիգ առանցքի շուրջը դարձկեն հենարան, որը ապահովում է չորանոցի պտույտը հորիզոնական հարթությունում որոշակի աղեղով՝ հետեւելով արեւի ընթացքին, իսկ որպես ջերմակուտակիչ օգտագործվում է սեւ օբսիդիան, 1 նկ.:

(51) 7 **G01B 11/26** (11) **1270** (13) **A2**
(21) P20020076 (22) 16.05.2002
(42) 16.07.2002

(71) Արմեն Մաթեոսյան (AM)

(72) Նորիկ Բազիկյան (AM), Արմեն Մաթեոսյան (AM), Արտաշես Մաթեոսյան (AM)

(73) Արմեն Մաթեոսյան, Երեւան, Նալբանդյան 45, բն.2 (AM)

(54) Կախովի գյուղատնտեսական մեքենայի՝ տրակտորի նկատմամբ անկյունային տեղափոխությունների չափման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անկյունային տեղափոխությունների չափման եղանակներին եւ կարող է կիրառվել մեքենատրակտորային ագրեգատների դաշտային փորձարկումների ընթացքում:

Տրակտորի հետ ագրեգատավորված կախովի գյուղատնտեսական մեքենայի վրա տեղադրված չափիչ դիագրամն աստիճանավորում են ըստ կախովի մեքենայի վերին ձգաձողի եւ տրակտորի երկայնական առանցքի միջեւ ընկած անկյան: Տրակտորի վրա տեղադրված լազերային ճառագայթման աղբյուրի ճառագայթի հետքով չափիչ դիագրամի վրա սեւեռում են որոնելի անկյունը եւ հաշվարկում նրա մեծությունը կախովի մեքենայի՝ տրակտորի նկատմամբ անկյունային տեղափոխությունների գծային կախումից:

Բարձրացվում է չափման ճշտությունը, 2 նկ.:

- (51) 7 **G01B 11/26** (11) **1271** (13) **A2**
- (21) P20020075 (22) 16.05.2002
- (42) 16.07.2002
- (71) Արմեն Մաթեոսյան (AM)
- (72) Արմեն Մաթեոսյան (AM), Արտաշես Մաթեոսյան (AM), Նշան Համբարձումյան (AM)
- (73) Արմեն Մաթեոսյան, Երեւան, Նալբանդյան 45, բն. 2 (AM)
- (54) **Մեքենատրակտորային ագրեգատի շարժման անվաճի երկայնքով լանջի թեքության անկյան չափման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է անկյան ընթացիկ մեծությունների չափման եղանակներին՝ լազերային ճառագայթման աղբյուրի ճառագայթի օգտագործմամբ, եւ կարող է կիրառվել մեքենատրակտորային ագրեգատների դաշտային փորձարկումների ընթացքում:

Ըստ եղանակի բերում են ուղղաձիգ դիրքի մեքենատրակտորային ագրեգատի շարժման անվաճի նույն լայնությունն ունեցող միասունի սայլակի վրա գործման առանցկակալների միջոցով ամրացված մեխանիկական համակարգը, նրա օգնությամբ ապահովում լազերային ճառագայթի հորիզոնական դիրքը, սեւեռում են չափիչ քանոնի վրայի լազերային ճառագայթի հետքի ցուցմունքը, որից հետո որոշում են լանջի թեքության անկյան մեծությունը որպես չափիչ քանոնի վրայի լազերային հետքի ցուցմունքի եւ գործման առանցկակալների կենտրոնների միջեւ ընկած հեռավորության հարաբերության արկտանգենս:

Բարձրացվում է չափման ճշտությունը եւ ապահովվում չափման անընդհատությունը, 2 նկ.:

- (51) 7 **G06K 19/00** (11) **1272** (13) **A2**
- G07F 07/08**
- B42D 15/00**
- (21) P20020067 (22) 29.04.2002
- (42) 16.07.2002
- (71) Ջեներըլ Թեքնոլոջիքըլ Սերվիսիզ Բամբընի ս.ա.լ. (LB)
- (72) Ֆադի Անիս Դաուք (LB)
- (73) Ջեներըլ Թեքնոլոջիքըլ Սերվիսիզ Բամբընի ս.ա.լ. (LB)
- (74) Ա. Պետրոսյան
- (54) **Կանխապես վճարված կրեդիտ-քարտ**

(57) Գյուտը վերաբերում է կանխապես վճարված կրեդիտ-քարտերին եւ կարող է կիրառվել առեւտրային կամ սպասարկման գործարքների վճարումները կրեդիտ-քարտի միջոցով կատարելու հնարավորություն ունեցող համակարգերում:

Սարքն ունի միկրոպրոցեսոր կրեդիտ-քարտի սերիական համարի եւ վճարումներ կատարելու վերջին ժամկետի վերաբերյալ էլեկտրոնային թվային տեղեկատվության ներմուծման եւ գրանցման համար, իսկ քարտի երեսներից մեկն ունի

կրեդիտ-քարտի սերիական համարի եւ վճարումներ կատարելու վերջին ժամկետի վերաբերյալ գրանցված տեղեկատվություն կրող հատված, որը ծածկված է ջնջվելու (քերծվելու) հնարավորություն ունեցող քողարկող պատվածքով:

Բարձրացվում է կրեդիտ-քարտի ունիվերսալությունը եւ կիրառման անվտանգության աստիճանը, 2 նկ.:

- (51) 7 **H01F 1/34** (11) **1273** (13) **A2**
- B01J 20/06**
- (21) P20020073 (22) 14.05.2002
- (42) 16.07.2002
- (71) Սերգեյ Հայրապետյան (AM)
- (72) Սերգեյ Հայրապետյան (AM), Համբարձում Խաչատրյան (AM)
- (73) Սերգեյ Հայրապետյան, Երեւան, Չերնիշեւսկու 58, բն. 1 (AM)
- (54) **Մագնիսական հատկությամբ կրողի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մագնիսական հատկությամբ անօրգանական կրողների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել քրոմատագրության մեջ քիմիական միացությունների մագնիսական անջատման համար: Մագնիսական հատկություն ունեցող կրողը՝ կոբալտի կամ միկելի ֆեռիտների փոշին կամ ցինկի եւ միկելի ֆեռիտների փոշիների խառնուրդը պատում են ալյումինի օքսիդի թաղանթով, ապա ստացված կրողը լրացուցիչ պատում են սիլիցիումի երկօքսիդի շերտով:

Բարելավվում է կրողի շերտերի միջեւ հարակցումը:

- (51) 7 **H01J 40/12** (11) **1274** (13) **A2**
- (21) P20020006 (22) 22.01.2002
- (42) 17.04.2002
- (71) Կարեն Դուլդազարյան (AM)
- (72) Դավիթ Դուլդազարյան (AM), Յուրիկ Սաֆարյան
- (73) Կարեն Դուլդազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)
- (54) **Պերբարձր հաճախությամբ մոդուլված լույսի ընդունիչ**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրոնիկայի բնագավառին: Սարքը կարող է կիրառվել օպտիկական կապի համակարգերում, լուսահեռաչափերում, արագություն որոշող սարքերում: Ընդունիչն ունի ռեզոնատոր, կիսաթափանց ֆոտոկաթոդ, դրեյֆի խողովակ, անոդ եւ երկրորդային էլեկտրոնների էլեկտրոդ, որին միացված է լրացուցիչ բեռնվածքի դիմադրությունը: Սարքն աշխատում է հետերոդինի սկզբունքով: Ստեղծված է մեծ սահմաններում

ելքային ազդանշանի ֆազի կարգավորման (փոփոխելու) հնարավորություն, 1 նկ.:

- (51) 7 H01J 40/12 (11) 1275 (13) A2
- (21) P20010165 (22) 27.12.2001
- (42) 15.03.2002
- (71) Կարեն Ղուղազարյան (AM)
- (72) Կարեն Ղուղազարյան (AM), Դավիթ Ղուղազարյան (AM), Յուրիկ Սաֆարյան (AM)
- (73) Կարեն Ղուղազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)

(54) Գերբարձրահաճախական դիսեկտոր

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրոնիկայի բնագավառին: Սարքը նախատեսված է գերբարձր հաճախություններով մոդուլված լույսի ընդունման համար:

